

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ-ՊԼՈՒԶԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

Պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հովհաննես Երզնկացին¹ միջնադարյան Հայաստանի XIII դարի ճանաչված գիտնական-քարոզիչ, բանաստեղծ ու հասարակական գործիչ է: Նրա գրչին են պատկանում բաղմաթիվ աշխատություններ: Դրանցից երկուսը ամբողջությամբ նվիրված են բնագիտության հարցերին: Առաջին աշխատությունն է՝ «Յաղագս երկնային շարժման...», որը այլ նյութերի հետ միասին հրատարակվել է Նոր Նախիջևանում 1792 թ., «Տետրակ համառոտ և լի իմաստասիրական բանիք» վերտառությամբ: Այս աշխատության հիմքը հանդիսանում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2018 (հին համարը՝ 2048) ձեռագիրը (թերթ 84—99)՝ ընդօրինակված 1621 թ.: Երկրորդ աշխատությունը՝ «Ի տաճկաց իմաստասիրաց դրոց քաղեալ բանք», հրատարակվել է 1958 թ. մեծերեք Մատենադարանի № 4-ում, Ս. Արևշատյանի «Հովհաննես Երզնկացու իմաստասիրական անհատ աշխատությունը» հոդվածում: Այս աշխատության հիմքը հանդիսանում է Մատենադարանի № 6670 ձեռագիրը (թերթ 91—111)՝ ընդօրինակված XVII դարում:

Հովհաննես Պլուզի աշխատությունների վերաբերյալ գրվել են մենագրություններ, որտեղ լայնորեն օգտագործվել են նաև վերևում նշված բնագիտական երկերը: Առաջինը թարգմանվել է ռուսերեն²:

Վերջին տարիներին մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին աշխատությունը հանդիսանում է Երզնկացու աշխատության ընդարձակ խմբագրությունը, որտեղ ավելացվել են նոր գլուխներ, կատարվել էական փոփոխություններ: Երկրորդը Հովհաննես Պլուզին վերագրելու համար լուրջ հիմքեր չկան:

Այժմ անցնենք այդ երկու աշխատությունների ապացույցմանը: Համադրություններ կատարելու և որոշ հարցեր լուսաբանելու նպատակով ստորև ղետեպուս ենք առաջին աշխատության առաջաբանն ու ենթագլուխները:

1ա //Յաղագս երկնային շարժմանն նուստ Յովհաննէս վարդապետ Երզնկացոյ շարադրեալ յիմաստնոց, ի խնդրոյ բարեպաշտ և եկեղազարդ պատանոյն պարոն Վախրանկին:

Ամենայն ոք, որ դբան, որ է ծնունդ անմարմին մտաց, գրով ի քարտիսի կամի դրոշմել, պարտի և զնորին պատճառն յանդիման կացուցանել, որպէս զի վերջին ժամանակին ծնընդոց մարդկան՝ յաւժարութիւն և սէր խնդրողի բանին: Եւ աշխատանք տուողի խնդրոյն մի՛ ծածկեաց ի

¹ Երկու Հովհաննես Երզնկացիներ, տարբեր մականուններով՝ Պլուզ, Մործորեցի, երկար ժամանակ նույնացվել են, մինչդեռ նրանք տարբեր անձնավորություններ են. տե՛ս ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 649 (ձան.):

² Н. О. Эми н. Космографический тракт. Иоанна Тцортцореци—Переводы и статьи. М., 1897, с. 268—274. Արմենոսի Սրապյան. Հովհաննես Երզնկացի. Երևան, 1958; В. К. Чалоян. История армянской философии. Ереван, 1959, с. 274—280. Ա. Գ. Տեք-Պոզոսյան. Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում. Երևան, 1960, էջ 352—365: Կ. Հ. Գրիգորյան. Երզնկացու փիլիսոփայական հայացքները. Երևան, 1962: Վ. Կ. Չալոսյան. Հայոց փիլիսոփայության պատմություն. Երևան, 1975, էջ 424—431:

բանասիրաց և աշխատասէր անձանց, զի կարատիքն բանի, իբրև գերկիր ծարատուտ զցաւոյ քաղցրութեան երկնի խնդրեսցեն, և ապա սպասաւորքն բանի, իբրև դամբ ընդունակ ցաւոյ զառեալն յանսահման ծովէ իսաստից և գետոց հոսմանէ, յաղագս ծուլութեան մի՛ արգելցեն:

1բ Ըստ որում և ես՝ նուաստ Յոհաննէս Երզնկայեցի, աշակերտ հոյգէլից հարն և սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր սուրբ գրոց բանի, ի թվիս/ ԶԼԳ պատահեաց գալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքս ի Տփլիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց, և հանդիպեցաւ մեզ խաւսել բանս քարոզութեան ի դուռն եկեղեցոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխանին Հայոց պարոն Քարիմատինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայրն պարոն Ոմեկն: Եւ էր խաւսեցեալ բանն յաղագս երկնային շարժմանն: Վասն որոյ ախորժելի եղև զուարթամիտ պատանոյն Վախթանկա, որ էր որդի կր/տ/սեր հռչակաւոր անուան պարոն Ոմեկին և մայրենի ազգաւ՝ թոռն մեծի իշխանին Ջալալին՝ տեառն խաչենա, որդի մար բարեպաշտի, որ էր Քրիստոսի արինաւքն զարդարեալ հոգի, և խնդիր բանիս յորդորող զորդի:

2ա Եւ յանդրեաց ի մէյ/նջ յաղագս երկնի և նորին շարժմանն, յոր հարկել յորդորեաց զտկարութիւն մեր՝ մեծազգի եպիսկոպոսի տէր Յոհան ազնուական զարմից և բարեսոհմիկ հարց ծնունդ: Որ և շարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնգրողաց: Եւ ակն առեալ ի պատուոյ շնորհնշուք տեառն և գերապատիւ եկեղեցոյ գլխոյն ի նրբաշաւիղ և ի կորովամիտ բանից սուրբ հարցն և վարժապետց մերոց և իմաստախոհ արանց, պարզեալ գրեցի համառատ բանիւ և աշխարհական խաւսիւք՝ վասն դիւրաւ հասկանալի լինել ընթերցողացդ:

Արդ՝ որ գրէք յաղագս աւգտի զսակաւ աշխատութիւն մեր, գրեսցիք և զայս նախադրութիւնս և զբան յիշատակի անուան խնդրոց, և զորոչ սորին, գրեալ լիջիք և դուք ի դիրն կենաց: Եւ որ ծուլանայ և թողու զսա, ոչ լիցի առանց պատժոց, իբր յոլով աշխատութեանց զիւր սակաւն գին տալ ոչ կամեցաւ զայլոց:

Յաղագս երկնից թէ քանի՞ են երկինք, և որպէս իմաստութեամբ յանգոյցից եղև հրամանան աստուծոյ: Ա

Յաղագս երկրորդ երկնիցն, և շրջագայութեան նորին թէ ո՞րպէս է: Բ
Յաղագս երկրի, թէ ո՞րպէս շուրջ գալն երկնի՝ երկիրս հաստատուն կայ, և երկինք միշտ շարժի: Գ

Վասն ծովու և ամենայն ջուրց: Դ

Եւ թէ՛ յի՞նչ պէտք են այս ամենայն ջուրքս զոր արար աստուած: Ե
Ջուր ծովուն վասն է՞ր աղի է. կամ զի՞նչ է պատճառն, որ այս ամենայն դետքս ի ծովն գնան, և ծովն ոչ լինի լցեալ, և յիւր շափէն ոչ ելանէ: Զ
Վասն օդեղէն երկնիցդ յորում կան լուսաւորքդ: Է

Թէ ո՞րպէս շարժի և շուրջ գայ գունդն երկնից. և ո՞րպէս գնայ արեգակն և լուսին և աստեղքն: Ը

Որպիսի օրինակաւ գիտասցուք, թէ արեգակն և այլ լուսաւորքդ ընդ արեւվելս երթան: Թ:

Յաղագս Չորս եղանակաց Տարւոյն: Ժ

Վասն եօթն գօտեացն՝ որք ասին եօթն պարունակք. և կոչի եօթն երկինք: ԺԱ

Յաղագս օդոյն որ է հողմն, որ ասի քամի: ԺԲ

Թէ ուստի՞ լինին այսոքիկք ի յօդն և որպէս: ԺԳ

Ձի՞նչ է Բալն: ԺԴ

Ձի՞նչ է Որոտն և Կայծակն: ԺԵ

Ձմեռն՝ որոտ է՞ր ոչ լինի և կայծ: ԺԶ

Եւ թէ յի՞նչ պէտք է որոտալն: ԺԷ

Յաղագս Ձեան և Անձրևի: ԺԸ

Յաղագս Կարկտի: ԺԹ

Թէ ուստի՝ լինի Յօղն և Եղեամն: Ի
 Զի՞նչ է Աղևղն՝ որ իջանէ, որ ասեն տէրունի գօտի: Ի՞՞
 Թէ զի՞նչ է հուրն որ յերկնից անկանի և քանի՞ ազգ են սոքա: Ի՞Բ
 Թէ զի՞նչ է այն որ Լուսինն բակ ունենայ: Ի՞Գ

Աշխատության առաջաբանը, այլ հարցերի հետ միասին, ցույց է տալիս, որ Հովհաննես Երզնկացին 1284 թ. (733+551) Տփղիսում կարգացած բանաստեղծությունը գրի է առել ու թողել սերունդներին:

Աշխատության ցանկից երևում է, որ մենք գործ ունենք մի համառոտ դասագրքի հետ, որտեղ շարադրված են բազմաթիվ հարցեր, որոնք Հովհաննես Երզնկացին չէր կարող շարադրել մեկ բանաստեղծության ժամանակ: Բնականաբար, հարց առաջացավ, թե № 2018 ձեռագրում պահպանված տեքստը, որից կատարվել է տպագրությունը, նախնական խմբագրությունն է, թե՞ ժամանակի ընթացքում փոփոխության ենթարկված օրինակ:

Այսպիսի հավանական ենթադրություն մենք սկսեցինք ծանոթանալ այդ աշխատության բոլոր ձեռագրերին: № 2174 ձեռագրում, որն ընդօրինակված է 1309 թ.³ Երզնկացու մահվանից 16 տարի հետո, մեզ հաջողվեց հայտնաբերել նախնական խմբագրությունը: Եթե այդ 16 տարիների ընթացքում Երզնկացու նշված աշխատությունը նոր խմբագրման չի ենթարկվել, նշանակում է № 2174 ձեռագրում մեզ հասածը նախնականն է և ծավալով մոտավորապես երկու անգամ փոքր է տպագրվածին:

Աշխատության առաջաբանը համառոտ և ընդարձակ խմբագրություններում մնացել է նույնը: № 2018 ձեռագիրը, որից կատարվել է տպագրությունը, ինչպես տեսանք, պարունակում է 23 ենթագլուխ, իսկ № 2174 ձեռագիրը՝ 16. № 2018 ձեռագրում ավելացված են դ, ե, յ, է, ը, թ ենթագլուխները: Նախնական խմբագրության առաջին երկու ենթագլուխները ընդարձակ խմբագրության մեջ դարձել են երեք ենթագլուխ, կատարվել են էական փոփոխություններ:

№ 2174 ձեռագրի համառոտ խմբագրության վերջին՝ «Յաղագս գարնան եղանակի և ի կենդանակերպան» ենթագլուխը № 2018 ձեռագրում որոշ հավելումներով դարձել է 10-րդ ենթագլուխը:

Երկրորդ աշխատությունը՝ «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք», վերագրվում է Պլուզին այն պատճառով, որ վերնագրում նշված է Հովհաննես Երզնկացի: Ս. Արևշատյանը գրում է. «Նախ ո՞ր Հովհաննես Երզնկացուն է պատկանում «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» աշխատությունը: Հայտնի է, որ հայ մատենագրության մեջ կան բազմաթիվ, մեկ տասնյակից ավելի Երզնկացի Հովհաննեսներ, որոնցից առնվազն երկուսը՝ Հովհաննես Պլուզ և Հովհաննես Ծործորեցի Երզնկացիները կարող են լինել ներկա աշխատության հեղինակը:

Հրապարակվող աշխատության վերնագիրը հնարավորություն չի տալիս այն Պլուզին կամ Ծործորեցուն վերագրելու: Վերնագրում ուղղակի ասված է, որ գործի հեղինակն է Հովհաննես Երզնկացին, թեև նման փաստից դժվար է եզրակացնել, թե վերոհիշյալ երկու Երզնկացիներից որն է սրա հեղինակը, բայց մենք, այնուամենայնիվ, հավանական ենք համարում աշխատությունը վերագրել Հովհաննես Պլուզ-Երզնկացուն³: Ինչպես երևում է, երկաստիճան ենթադրության միջոցով այդ ստեղծագործության հեղինակ է ճանաչվում Հովհաննես Երզնկացի Պլուզը:

Այնուհետև Ս. Արևշատյանը փորձում է այդ եզրակացությունը հիմնավորել նաև Հովհաննես Երզնկացուն վերագրվող երկու աշխատությունները իրար հետ համագրելու միջոցով: Նա գրում է. «Պլուզը 1284 թվականին Տփղիսում

3 Ս. Արևշատյան. Հովհաննես Երզնկացու իմաստասիրական անհայտ աշխատությունը. — «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 297--298:

գրում է «Յաղագս երկնային շարժման» և «Յաղագս երկնային զարդուց» աշխատությունները, որոնք, իրենց բովանդակով՝ շարժման, որոշակի նմանություն ունեն ներկա բնագրի հետ: Առանձնապես հետաքրքիր են արժարժված տիեզերագիտական և տարրաբանական գաղափարների համընկնումները: Սակայն ներկա «Բ» տառակա իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» տեքստը, վերոհիշյալ երկու գործերի համեմատությամբ, ավելի համառոտ է և միաժամանակ ծանրաբեռնված է այլալեզու տերմիններով»⁴:

Համագրության նպատակով այստեղ զետեղենք երկրորդ աշխատության ենթավերնագրերը. Ա) Յաղագս ապացուցի, Բ) Վասն նիւթի և տեսակի, Գ) Յաղագս լինելութեան և ապականութեան, Դ) Խստալոյս իմաստասէրի Յովհաննէս Երզնկացու:

Ենթավերնագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք ոչ մի նմանություն չունեն: Ինչպես տեսնում ենք, շրջորդ ենթագլուխը վերնագրված է Հովհաննէս-Երզնկացու անունով, մինչդեռ ամբողջ աշխատանքի վերնագրում նույնպես նշված է Հովհաննէս Երզնկացի: Հարց է առաջանում. IV ենթագլուխը առանձին աշխատություն է, թե՞ աշխատության մեկ ենթագլուխը: Այս կապակցությամբ Ս. Արևշատյանը իր հոդվածի տողատակում գրում է. «Վերջինս նոր աշխատության վերնագիր չէ, ինչպես կարծել են Մատենադարանի փիլիսոփայական ձեռագրերի ցուցակի կազմողները (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 428): Բովանդակությունից երևում է, որ այդ վերնագրից առաջ և հետո արտագրված բնագրերը ըստ էության չեն տարբերվում միմյանցից, իսկ այդ երկրորդ վերնագիրը ամենայն հավանականությամբ, ավելացվել է գրչի կողմից:

«Խստալոյս իմաստասիրի Յովհաննէս Երզնկացու» ենթավերնագրից հետո եկող տեքստը փաստորեն երրորդ՝ «Յաղագս լինելութեան և ապականութեան» ենթագլխի շարունակությունն է»:

Եթե IV ենթագլուխը առանձին աշխատություն չի եղել, ինչու՞ գրիչը պետք է նոր վերնագիր ավելացներ:

Այժմ՝ անդրադառնանք այդ երկու երկերի բովանդակությանը:

«Յաղագս երկնային շարժման...» աշխատությունը նվիրված է տիեզերագիտական հարցերին, երկնքին և երկրին, նրանցում տեղի ունեցող ֆիզիկական երևույթներին: Երկրորդը հիմնականում արժամիական է, շոշափվում են նաև փիլիսոփայական ու աստղագուշական հարցեր: Այդ աշխատություններին ո՞նց ու լեզուն արմատապես տարբերվում են: Երկրորդ աշխատության առաջին երեք գլուխներում գործածված են շուրջ հարյուր արաբերեն և պարսկերեն բառեր: Ս. Արևշատյանի կողմից կազմված օտար բառերի բառացանկում տեղ չեն գտել IV ենթագլխում օգտագործված հետևյալ լատիներեն բառերը. իմատուս, հեմատուս, պլամտուս, պատմուս, պրմտուս, քինատուս: Եթե առաջին երեք ենթագլուխներում երկնքի համար գործածվում է արաբերեն ֆալաբ բառը, ապա IV ենթագլխում գործածված է երկինք:

Այսպիսով, որոշակի կարելի է ասել, որ IV ենթագլուխը չի հանդիսանում ամբողջ աշխատության օրգանական մասը:

Երկրորդ աշխատության մասին վերևում արված դատողությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ այն Պլուզին վերագրելը սխալ է, հետևաբար, Հովհաննէս Երզնկացի Պլուզին նվիրված մենագրություններում և հոդվածներում այդ բնագիտական երկի հիման վրա արված եզրակացությունները պետք է վերանայվեն:

⁴ Նույն տեղում, էջ 298:

⁵ Նույն տեղում, էջ 299:

К ВОПРОСУ О ЕСТЕСТВЕННОНАУЧНЫХ ТРУДАХ,
ПРИПИСЫВАЕМЫХ ОВАНЕСУ ЕРЗЫНКАЦИ-ПЛУЗУ

Проф. Г. Б. ПЕТРОСЯН

Резюме

Под именем Ованеса Ерзынкаци—армянского ученого, проповедника, поэта XIII века до нас дошли, в частности, два труда, целиком посвященных естественнонаучным вопросам. Первый из них, «О движении неба», представляет собой текст лекции, прочитанной им в 1284 г. в Тифлисе, опубликованный в 1792 г. в Новом Нахичеване (рукопись Матенадарана № 2018, 1621 г.). Второй труд, «Извлечения из сочинений мусульманских философов» (рукопись № 6670, XVII в.), издан в 1958 г. в «Вестнике Матенадарана» № 4. Сличение рукописи первого труда с более ранним нововывявленным оригиналом (рукопись № 2174, 1309 г.) показывает, что они существенно отличаются друг от друга. Сравнительный анализ содержания второго труда с первым позволяет утверждать, что «Извлечения...» Ованесу Ерзынкаци не принадлежат.